վկայագրումների հոսքը, սակայն մյուս կողմից էլ՝ հենց այդ «ավելորդ» վկայակոչումներին ենք պարտական բազմաթիվ պատմագիրների կենսագրական տեղեկությունների համար: Ավելին՝ այդ վկայակոչումները աստիճանաբար հավաքվելով, գոյավորում են մի ամբողջականություն, որը դրսևորվում է կերպարային ձևի մեջ: Այլ խոսքով՝ վկայագրված դեպքերի ու իրադարձությունների հավաստիության փաստարկումները ուղեկցվում են պատմիչի կերպարային դրսևորումներով: Դրանց՝ պատմագրության տեքստային տարածության մեջ ցաքուցրիվ վիճակը քաղաբերելով համակարգելու դեպքում՝ ձևավորվում է ամբողջական մի կերպար: Ահա Դավրիժեցու մի քանի կերպարային գծեր՝ «Գիրք պատմութեանց»-ի տարբեր հատվածներից. «Եւ սուրբ գլուխն Անդրէի առաքելոյն կայ այժմ ի նոյն վանքն, որ բազում անգամ ուխտ արարեալ և համբուրեալ եմք զնա» (էջ 168), «և զսպի և զտեղի վիրացն եցույց մեզ ի ժամանակս յայս, որ և զպատմութիւն զայս նա պատմեաց զմեզ, որոց ինքն ականատես էր» (էջ 170), «Եւ ժամանակս՝ յորս այժմս կամք մեք, է թուականն մեր Հայոցս ՌՃԷ, յորում և զպատմութիւնս շարադրեալ գրեցաք, պատահեցաւ գալ ի մեծահանդէս քաղաքն Սպահան» (էջ 180), և այլն:

«Ինքնակենսագրության երևույթը և անձնական կյանքի մոտիվները առավել մեծ տեղ են գրավում ուշ միջնադարի հայ գրականության մեջ, երբ անձը ավելի ու ավելի շատ է սկսում տեսնել ու արժեքավորել իր դերը հանրության մեջ[11],– խնդիրն այսպես է մեկնաբանում Հենրիկ Բախչինյանը:

Հայ պատմագրության մեջ ընդհանրապես ու Դավրիժեցու պատմագրքում մասնավորապես՝ կերպարաստեղծման ձևերից մեկը գրական դիմանկարի կերտումն է: Ինչպես նկատում է Մայիս Ավդալբեգյանը Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» հյուս-

---

[11] ***Հենրիկ Բախչինյան,*** Ուշ միջնադարի հայ յուշագրութիւնը, առանձնատիպ Հայագիտական Հանդէսի ԺԳ. հատորէն, Պէյրութ, 1995, էջ 53: